


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՓԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրի համար տրեւելի. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան Թրանս 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

... ՄԵՐ ՄԷՋ ԼՈՒԱՆՔ

Փարոսի վերջին թիւով հրատարակեցինք Աղեքսանդրիոյ Թաղական Խորհուրդին պաշտօնական մէկ նամակը որ կը յայտարարէ թէ՛ ի նպատակ գաղթականներու կազմակերպութեամբ վերջին ցայգահանդէսի կարգադիր Յաննանա-ժողովոյ գանձապետը, Պ. Ապէթ, ինքնաբե-րաբար յանձնած է գանձութեամբ բոլոր գու-մարները, առանց վստահութեան ինդիք յա-րուցանելու : Այս հերքումը ստացանք նոյն-քան հաճութեամբ որքան ցուով արձագանգ տուած էինք հակառակը պատմող զրոյցի մը : Ուրեմն, միջազգային Յաննանաժողովը, որ մեծ մասով կը բաղկանար եւրոպացիներէ, կարե-ւորութիւն չէ ընծայեր այս կամ այն հայուն կողմէ իրեն եղած անուղղակի դիմումին կա-՞յերիւրանքին, զգալով անշուշտ թէ ազոր շարժառիթը կուսակցական հակառակութիւն մըն է պարզապէս :

Իսկ թէ եղած է այդ տեսակ դիմում մը, այդ կէտը լուծեալով կանցնի Թաղա-կան Խորհուրդի դերատեսակետը . և իրա-ւունք ունի, քանի որ սպասուած արդիւնքը չունեցաւ այն, ինչ որ գոհացում կուտայ ի-րեն և իր պաշտօնակիցներուն :

Մեր իմացածին նայելով, գտնուած են արդարեւ մէկ-երկու ազգայիններ որոնք գա-ցած են փոխաւ օտարներու ականջին, թէ դրամը մի՛ յանձնէք : Ասոնք նախ մտածելու էին թէ ազգային մարմին մը որ մօտաւորա-րապէս 3000 ոսկի հանգանակած ու մատա-կարարած էր մէկ տարուան մէջ, կրնար նոյն-քան խղճահարութեամբ գործածել նաեւ 250 ոսկիի համեմատապէս ջնջին գումարը : Եւ յե-տոյ, նոյն իսկ ենթադրելով որ քանգատի պատճառ մը ունենային, յոյն, հրեան կամ ֆրանսացիին չէ՞ր զայն լսելու ձեռնհաս մար-մինը : Աղեքսանդրիոյ Թաղականէն վեր կայ Առաջնորդարանը, ու անկից ալ վեր՝ Պոլսոյ Պատրիարքարանը :

«Աղտոտ լաթերնիս մեր մէջ լուանք» կ'ը-սեն ֆրանսացիները . այս պատուական առա-ծը մէկէ աւելի անգամներ յիշելու առիթ կուանանք դժբաղդաբար, ինչպէս ներկայ պարագային մէջ : Օտարին դիմել . ահա՛ մեր ունակութիւններէն, մեր բարբերու տխուր ե-րեւոյթներէն մէկն ալ : Եգիպտոս, Պոլիս, կամ

Թիֆլիզ, ամեն տեղ նոյն բանն է . այն միջա-վայերուն մէջ ուր կառավարութեան դիմուե-լով արդիւնք մը ձեռք կը բերուի հակառա-կորդին դէմ, վարանում չի կայ . իսկ հոն ուր կառավարութիւնն իր իրաւունքի ու պարտա-կանութեան սահմանէն դուրս ելլելու փութ-կոտութեան պէտք չի տեսներ, դարձեալ դի-մում օտարին, դոնէ անհատներու, բաւական է որ այդ կերպով ազգակցի մը վարկը կոտ-րի, բարոյական ֆրաս մը համնի : Լրագիր մը կայ որուն հաշտ աչքով չես նայիր, զայն խա-փանելու աշխատէ . պաշտօնակից մը ունիս որուն համակարծիք չես, զայն արատաւորել փորձէ . վարդապետութիւն մը կը քարոզէս որուն ականջ կախող չի կայ, ընդդիմախօսներդ զրպարտէ . ու միշտ օտարի մը մատը խոթե-լով գործին մէջ : Ասոնք ա՛լ սովորական դար-ձած են մեզի համար : Եսասիրութեան ու հա-կառակութեան ոգին այնքան սաստիկ կը լլան որ կը մոռցունեն ազգային արժանապատուու-թեան զգացումը :

Եւ ասոնք ընդունելով քիչ շատ բարեկեցիկ վիճակ, գործ կամ հարստութիւն ունեցող մարդիկներ են սովորաբար . հագուած սքուած պարոններ զորս առաջին անգամ տեսնելու-դ ակնածանքի պէս բան մը կուենանա, իրենց գտնուած գեղին կամ քաղաքին մէջ պզտիկ «անձնաւորութիւն»ներ են . քիչ և ծանր կը խօսին՝ լուրջ երեւնալու համար, ու միշտ ժը-պիտ մը ունին իրենց շրթունքին ծայրը, բա-րեւրութեան նշան : Օ՛հ, անգամ մը պըր-պտեցէք ասոնց հոգիին խորը, և լրջութեան ու բարութեան տեղ ինչե՞ր պիտի գտնէք :

* *

Այս նկարագիրներ հեռուները կրնան տանիլ զմեզ սակայն . անոնք իրենց տեղը պի-տի ունենան «Տիպարներ»ու բաժնին մէջ . այսօր, ուղեցինք միայն ցաւ և զայրոյթ յայտ-նել այն անբացատրելի զգացումին դէմ որ հայը կը մղէ օտարին դիմել իր ազգակցէն պզտիկ վրէժ մը լուծելու, ո՞ր մը յագեցնե-լու համար : Աղեքսանդրիոյ միջադէպը, թէև շատ աննշան, նմոյշ մըն էր այդ յոռի հա-կումին . բարեբաղդաբար օտարները մեզմէ աւելի աղէկ գիտցան յարգել մեր ազգ-պաշ-տօնական մարմինները : Լաւագոյն գաս մը չէր կրնար տրուիլ :

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Ե .

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒՅԻ ՆԻՆԸ

Աղանիկի պէս միամիտ, ջորիի նման աշխատա-սէր և նորմանտիական ձիւռ մը հոնդոյն լայնախոտ է Գում-գարուցի կինը :

Վագր կը կտրի երբ իրեն կը մօտենաս . . . առանց կանխակալ հաւանութեան :

Կիրակիէ կիրակի մազերը կը սանտրէ :

Նաւագարի մը պէս հայհոյել զիտէ և բեռնա-կրի մը պէս կոշտ պատասխաններ կուտայ :

Իր դրացիներէն են՝ տունը տեղը, չօնու-խին քեփսին, Պատրիարքարանի տնականներուն եւ-լալը կամ չէլալը, զրացիներուն շարաթը բանի՛ . խայ միս ուտելը, Նեկտար հանձնին բանի խաթ չամաւը ունենալը և սա՛ Մանիկին քանի տնու-յոյ ըլլալը :

Իմացականութիւնը այնքան ցած է որքան Նե-զո՛՛ Մայիսի մէջ :

Իր զբոստեղիներն են, Եկեղեցին և հորին գլուխը :

Շարաթ իրկուան վիզը, մազերը, թեւերը կը լուսաւ և իր էրկանը բախիկն թէփփին կը պտտաւտէ :

Ստէպ բաղնիք կերթայ և այնքան կը քերթուի որ դուրս ելած ատենը կարծես մարմինն մաս մը հոն թողած է :

Պէյ օղլուի ջլթիկները կըսէ՝ երբ խօսքը Բերայի կինը կը վրայ է :

Աստուած նախ Գումգարուցի կինը տեղած է և ապա զէքին ետըլը օղլուին :

Հարստութեան աւելցած գունաւոր ճանփէս ֆիստոն մը և խաթիֆէ երկայն բօլֆա մը ունի զորս աւագ օրերուն մէջտեղ կը հանէ :

Այդ ֆիստոնը և այդ բօլֆան, յաւիտենակա-նութեան հետ դրաւ դրած են՝ երկարակեցութեան record-ը վաստակելու համար :

Իր ամբողջ գոհարեղէնը կը կազմեն՝ էլժամ կիւլ մատնի մը որ կնքահօրը ընծան է և ելմաս երկայն օղեր զորս կեսուր օլանալը սուած է իրեն :

Երբ զինուորին վաճառ և խորոված մօին «աղ-ջիկ մ'հեկնար» կըսէ՝ Գումգէնի ջախ գրաբառ գիտ-նալ կը կարծէ :

Գովէն լասթիկով բօթին կը հագնի՝ Աստուա-ծատուր Պատրիարքին օրէն ի վեր :

Ամենքն ալ Այվաղեանը կը ճանչնան :

—Քա՛ վո՛ւյ խաղեթածի էղեր է, վայ գլխուն, տահա քանի՞ տարի է թի ինծի ետգմա կը պերէր :

Շարաթ իրկուանները էրկանը հետ բախի կը խմէ : Մեծ-պահքի եօթը շարաթները Ս. Գրքին պա-հանջած կերպովը ժուժկալութեամբ կանցընէ :

Քրօշէն՝ իրենց համար բանաստեղծութիւն մըն է, քրօշէ կայ սեղանին, աթոռներուն, բանաբէին, պոլեօին, մահճակալին և շապիկներուն վրայ և հոն՝ ուր գուլպաները կը վերջանան :

Իրենց գիտցած երգերն են «Մայր Արաքսին և Զափրաստճեանի «Գուր մէջէն ես բովն»ը :

Նաւագարին վաթօնի կըսեն և ծխախոտի տուփին «Թիւթիւնիս բօթմէն»ը :

Քառասուն տարեկան ընտանիքի անդամները արդեն մեր ունենալ կարգին:

Եթե երբեք սիրային յարաբերություններ ունենան, կոմ վարդապետի հետ է և կոմ գեղազոր:

Ժի: Խախտալ գործի ձեռք չեն դարձրել:
Ս. հագին կերպով լեզուի կը դնեն լուսաբերուն մէջ եւ անտանի կերպով ձեռնակոյտերնուն վրայ:

Տակէն Խորլան միսս կը հագնին ձմեռը:

Թ. Ս. Մ. Մ. Ս.

Կ. ՊՈԼՍԵՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն Սղանսարսին թէ ոստիկանութիւնը բաւական թուով տաճիկներ ձերբակալեր է որոնք սրճարաններուն մէջ կը քննադատէին հաշտութեան պայմանագիրը:

Նոյն թերթին թղթակիցը կիմանայ, թըրքական աղբիւրէ, թէ Սուլթանը առաջարկներ կը անէ եղբր Անդրիոյ դեսպանին և թէ երկու երկիրներուն միջև մերձեցում մը հաւանական կերելի:

— Գերմանացի զօրավար Բամբոհէվէնէր փաշայի պայմանագիրը, իբրեւ մարդիչ օսմանեան բանակին, երեք տարուան համար վերանորոգուեր է՝ տարեկան 20,000ական ֆրանքի յաւելումով մը:

— Տէյիի Նիւսին Հոռոմի թղթակիցը իր թերթին կը հաղորդէ Կ. Պոլսէ առնուած լուր մը, թէ Սուլթանը բացարձակապէս կը հակառակի Կրէտէի ինքնօրինութեան ինչպէս նաեւ կղզիին քրիստոնեայ կառավարիչ մը անուանելուն:

— Սղանսարսին տեղեկութեանց նայելով, ձէվատ փաշա անընդհատ կառավարիչ եղբր Սուլթանին՝ ազդու միջոցներ ձեռք առնելի Կրէտէ: Կը կարծուի թէ Սուլթանը իբրեւ անձնական շնորհ մը պիտի խնդրէ Տէրութիւններէն՝ այնպէս մը կարգադրել կրէտական խնդիրը որ իր ազդեցութիւնը չի կորորի:

— Դուռը դիտողութիւններ ուղղեր է պուլկար իշխանապետութեան, Ֆիլիպէի շուրջը կառուցուած ամրութիւններուն նկատմամբ: Միտքերը չատ դրուուած են Պուլկարիոյ մէջ և նախարարութեան անկում մը մտալուտ կը կարծուի:

— Նոյնօրի, Վիէսովսքի և Լիւքսոֆ ուսուցիչները չեն ուզեր լուրջ կարեւորութիւն ընծայել այն լուրին իբր թէ Սուլթանը՝ Կրէտէն Թուրքիոյ համար այլ եւս կորսուած նկատելով՝ տրամադիր է եղբր զայն Գերմանիոյ թողուլ:

— Վիէնայէն կը հաղորդեն Լոնտոնի թերթի մը թէ Սուլթանը բացորոշապէս կը մերժէ օսմանեան զօրքերը ետ կանչել Կրէտէէն:

— Կ. Պոլսոյ ուսական դեսպան Պ. Նէլիտֆ, որ Հոռոմի դեսպան անուանուեցաւ քանի մը ամիս առաջ, նախորդ շաբթուն հանդիսաւոր կերպով պալատ երթալով Սուլթանին ներկայացեր է հրաժեշտ տանելու: Ետոյ պաշտօնական հասցեկերոյթ մը տրուեր է ի պատիւ իրեն: Սուլթանը ծանրադին ծխատուփ մը նուիրեր է: Պ. Նէլիտֆ ամիսս Վին մեկնելու է Կ. Պոլսէն՝ Վիէնայի ճամբով Հոռոմ երթալու և իր պաշտօնի գլուխն անցնելու համար: Քանի մը օր պիտի մնայ ի Պատէն-Պանտէն ուր Զարին պիտի ներկայանայ:

— Կը յիշուի թէ հաշտութեան նախաշաղկ պայմանագրին այն յօդուածը, որ կը տրամադրէր թէ վերջին պատերազմին ժամանակ հեղին բանակին ծառայող օսմ. հպատակները (յոյները) ներում պիտի գտնեն ու անարգել իրենց տեղերը դառնան, առկախ կը մնայ: Կ. Պոլսէն առնուած նորագոյն լուրերու նայելով, այդ յօդուած եւս ընդունուեր է Սուլթանին կողմէ:

— Եթէ ճիշդ են Թալիի Կ. Պոլսոյ թղթակցին տեղեկութիւնները, կերեւայ թէ հաշտութեան կնքումը մեծ գոհունակութիւն պատճառեր է թուրքերուն ընդհանրապէս, — հակառակ սրճարաններու մէջ կատարուած ձերբակալումներուն զորս յիշած ենք վերեւ: Աւասիկ բարիզեան թերթին այս առթիւ ստացած նամակը:

Յայտնի է որ հաշտութեան պայմանները թէվ. Ֆիլիպ փաշայի ու Տէրութեանց ղեկավարներուն միջև ստորագրուելուն պէս, օսմ. կառավարութիւնն իսկոյն հրաման ղրկեց իր լուրը ծովային իշխանութիւններուն որ ազատ թողուն հեղինական զօր կողմ առաջադրուածներն անցնելու: Օսմանեան ջորքերուն մէջ երեւցող առաջին յոռական նաւերն եղան երեք շողենաւ որոնք գէպի Սեւ ծով ուղղուեցան: Անոնց անցըր Վոսփորէն՝ ճամարիտ պատահար մը եղաւ Կ. Պոլսոյ հասարակութեան համար, տեսակ մը ժողովրդային հանգէս: Վոսփորի Սեւ ծովու բերանը պահպանող ամրոցները զօրներով զարդարուեցան ու ողջունեցին յունական նաւերը: Խուռն բազմութիւն դիմած էր Վոսփորի երկու եղբրները: Վոսփորի գիւղերը բանող շողենաւերու անցորդներն ալ կողմնէին յունական նաւերը: Պոլսոյ նաւահանգստին մէջ, ոչ նուազ սաստիկ էր հանրային հետաքրքրութիւնը ի տես կապիտ ու ճերմակ զօրջին: Վերջապէս, յունական երեք նաւերուն երեւումը Պոլսեցիներուն կողմէ նկատուեցաւ իբրեւ իրական ապացոյց մը, — վասն զի հաշտութեան բանակցութիւնները ամեն մարդ երկար կը դառնար, — թէ պատեւրազմը լծեցած է:

— Ժողովուրդ է ժիրպիսին՝ եւրոպական չենք գիտեր ո՛ր թերթէն առնելով, իր Սուրհանդակի Լուրերուն մէջ հերքում մը կը հրատարակէ, թէ անհիմն է անգլիական թերթի մը այն լուրը որ հինգ հարիւր հայեր գաւառները ղրկուեր են ընդ հակողութեամբ:

Ամենուս ալ փափագն է որ ճիշդ ըլլայ այս հերքումը: որչափ որ գիտենք սակայն, վերջին օգոստոսի գէպէն յետոյ Պոլիս վերադարձող հայերուն նկատմամբ ծայրայեղ ու անտեղի խստութիւններ ի գործ կը դրուին:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Տխր Համբարձում Պէրպերեան նամակով մը խորագրութեանս գիւծած է խնդրելու համար որ հերքում մը տրուի այն թերթիմացութեան որով իր առնուն ալ յիշուած էր մեր վերջին խորագրականին մէջ՝ Աղեքսանդրիոյ վարժարաններու տնօրէնի փոփոխման խնդրոյն առթիւ:

Նամակագիր պարոնը, որ մաթէմատիքի ծառայող դասատու մըն է, մեզ կը փառահեցնէ թէ երբէք իրեն չէ առաջարկուած այդ պաշտօնը և ինք բնաւ չէ ունեցած իրեն վերագրուած մասնակցութիւնը որ Պ. Ասքանաղեանի արժանապատուութիւնը վիրաւորելու հանգամանք ունենար: Ընդհակառակը, Պ. Հ. Պէրպերեան կրցածին չափ աշխատած է համաձայնութիւն մը գոյցնելու ընդ մէջ թալ: Խորհրդոյ և Պ. Ասքանաղեանի զօր իր ճշման տարուան բարեկամը՝ կը կոչէ:

Այս հրապարակային գոհացումը տալէ ետք Պ. Պէրպերեանի, կը փութանք աւելցունել թէ Աղեքսանդրիոյ ազգ. վարժարանի տնօրէնի փոփոխման խնդիրը նայն վիճակն ունենալէ չիղազրիր ինչ որ պարզած էինք մեր նախորդ թիւով: անուան սխալում մը կար միայն, Պ. Պէրպերեան քողեւոր տեղ Պ.

Պէրպերեան տպուած ըլլալով. բոլոր մենք անձի հետ խնդիր չունինք, և նոյնքան ուժով պիտի պնդէինք մեր պահանջման մէջ եթէ, օրինակի համար, Պ. Ասքանաղեանը եղած ըլլար թաղական աղաներու մէջ մասին Բանթիսան ու անկից աւելի կարող ուսուցիչ մը գտնուէր տնօրէնի պաշտօնին մէջ, զոր երկրորդական դաստիարակութեան իջեցունելու պէտք հոգաբարձուները:

Այս առաւօտ եւս ստացանք քանի մը նամակներ Աղեքսանդրիոյ մեր բարեկամներէն, որոնք առնուն ալ նոյն բարի վկայութիւնը կուտան Պ. Համբարձում Պէրպերեանի մասին որուն անձը բնաւ խառնուած չէ այս խնդրոյն մէջ, Պ. Ասքանաղեանի միակ մրցակիցն ըլլալով Պ. Պէրպերեան՝ երբեք տնօրէն Այնթապի Ուսումնարանին:

ԱՆԱՐԵՒ ԵՐԿԻՆՔ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

Սըրտիս պէս տըխուր ու քեանաւորուած, Զուրկ իր արեւն՝ զուարթ, կենսատու, Զոր միմեանց համար ստեղծեց Աստուած Տիեզերքին մէջ զիրար զգուելու, Երկինք ալ այսօր կարծես սուղ տաք կարտասուէ տառնց կաթիլ մ'արցունքի, Տրոսութիւններուն էն դառնը զոր մեր Զի կրնար տանիլ թող տկար հոգի: Բայց ան՝ իր անբաւ տարածութեան մէջ, Գիտէ սպասել անձայն, անխնայ, Որ ամպերն անցնին, առնեն ելեւէջ, Ու մարդն երազէ գինքը գիտելով:

* * *

Երկինք ու արեւ, ո՛հ, որչափ աստեղ կրնան իրարմէ թափուած մընալ: Սիրահարներ են որ զիրար աստեղ՝ Մէկտեղ ապրելու երգումն ենք ալ: Հեգնութիւն մըն է զոր մեր երեւին կը նետեն վիճին, լուս, արհամարհոտ: Դաս մը բնութեան՝ կնո՛ղ որ իր սին կեղծիքներովը, կիրքերովն աղտոտ Գայթապէ սիրոյ իտէպն հրգօր: Ու երտասարդին՝ որ երէկ իր կեանք Զօնէր աղջկան մ'երտալուն, աղւոր, Եւ այսօր կերթայ գտնել նոր տարիանք:

* * *

Երկինք բացուեցաւ զուարթ ու պայծառ Ահա՛ իր կապոյտն ու ոսկի արեւ: Անհուն հրճանքով կը զգուեն զիրար, Լուս ու վեհապան՝ մեր գլխուն վերեւ: Եւ ես կը մնամ, — ինձ պէս քանինե՛ր — Տըրտում ու տխուր, կարօտովն անգին Յիշատակի մը, համակ յոյզ ու սէր, Որ ճարագայթն էր կեանքիս արեւին: Ո՛ւր էր թէ երկինք միշտ պնդէ մընար, Զուրկ իր կապոյտէն, տըխուրով, պնդոյ, Հոն ցոլացումը գտնելու համար Դառնացած սըրտիս, սըգաւոր հոգոյս:

Գահիրէ, 8 Հոկտեմբեր

ՏԱՐԱԳԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

— ՎՈՐՈՐԴ —

Պ. Գ. Ք. Պոսթըն (Ամերիկա). — Քանի մը ամսէ ի վեր mandat-posteի դրութիւնը հաստատուած ըլլալով նոր աշխարհի և եգիպտոսի միջև, պատճառ մը չունիք ձեր լաճնեղինը այդչափ ուշացնելու:

Նոյն իսկ կրնար պահարպնի տակ 5 տողարի թղթադրամ զրկել մեզի:

Պ. ՏԻԳՐԱՆ ՊՅԱՆԱՆ. Լօրենս (Ամերիկա) Փառնոք Ա. Թիւնի սիսեալ ձեզ զրկեցինք երէկ:

Զ. . . Դանիլե. — Ուշ կամ կանուխ, այդ խնդիրը այդպէս պէտք էր վերջանալ:

Խ. Դ. Բարիզ. — Մինչեւ Եօր պէտք է սպասենք: Դուք առաջինը չէք սակայն լոյսի այդ կեղծոյնին մէջ բաժնեկիներն . . . խաւարի մէջ ձգողներուն:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Բարիցի Արեւելագիտաց համաժողովի վերջին գումարման մէջ (ԺԱ. նստաշրջան) հայերէն լեզուի ուսումնասիրութեան պէտքն ու կարեւորութիւնը անգամ մը եւս շեշտեցան օտար գիտնականներու կողմէ: Պ. Բառիեռ ցոյց տուաւ թէ լեզուագիտութեան համար ի՞նչ շահեկանութիւն պիտի բնծայէր հայերէն Աստուածաշունչի ուշադիր ուսումնասիրութիւնը: Աստուածաշունչի քաղցր-մանութիւնը մէկ անգամեւ կասարուած չէ, ու Աւեստանին քաղցրմանութիւնը կը համարուի հայերէնի ամենեւեմ հին բնագիրը: Պ. Մեյքէն ժողովին հաղորդեց ուսումնասիրութիւն մը զոր կասարած էր հայերէնի ցուցական դերանուններուն վրայ որոնց մէջ կը գտնէ մեր լեզուի ամենեւեմ ինքնատիւ յատկութիւններէն մէկը: Մասնաւորապէս զբաղած է յօդին ծագումովը զոր կը վերագրէ ոչ թէ հին ցուցականներու, այլ հին մակբայներու: Պ. Մեյքէն համարեց ինքեզ հաղորդեց մատուցած Հայր Քաջեմեարեանի կողմէ դրուած լեզուաբանական աշխատասիրութիւն մը:

Համաժողովին ներկայ եղող ազգայիններէն՝ Տ. Սուխաս վարդապետ Պարոնեան, Պ. Կարապետ եղբանց, Պ. Արքայր Յովնանեանեանց եւ Պ. Յովնանեան որեւէ աշխատասիրութիւն չի ներկայացուցին. Պ. Լեւոն Մըստերեանց հաղորդեց գլխաւոր մասերը գրքի մը զոր հրատարակած է Մոշի գաւառաբարձուն վրայ: Ուրիշ լեզուական ուսումնասիրութիւն մըն ալ ներկայացուցաւ Պ. Հ. Աճառեանի կողմէ:

Պ. Կարապետ Պատմաճեան մեկնեց Աւաիւրի արձանագրութիւն մը զոր Պ. Սեյաճիշը գտնելով՝ հասցստեց ու շնորհաւորեց հնագէտ երիտասարդը: Պ. Պատմաճեան միանգամայն ժողովին ներկայացուց հին մարմարի կտոր մը զոր Պոլսոյ բանտին մէջ գտնած էր եւ որուն գրեթէ խալապետ դրուելով Թէօօրուս անունը կը կարդացուի:

Պ. Պատմաճեան, որ ծանօթ է իր լեզուաբանական ու հնախօսական յօդուածներով, այդ կարեւոր գիտք եւ ուսումնասիրութիւնը կասարած էր իր բանաստեղծութեանը միջոցին որ տեսց իր երեք տարի:

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարապետ Մուսթաֆա փաշա Թէհրանի եւ միւս նախարարները, հինգշաբթի իրիկուն կառավարութեան Գահիրէ դարձան Ալեքսանդրիայէ ուր անցուցած էին ամառանային եղանակը:

— Զօրավար Քէնէթ Հէնտէրըն երէկ իրիկուն Ալեքսանդրիա ուղեւորեցաւ, քաղաքին անգլ. զօրաց հրամանատարութիւնն ըստանձնելու համար, Եգիպտոսի անգլ. զբաղիչ բանակին նորընտիր հրամանատար Սըր Ֆրանսիշ Կրէնֆէլդ հասած ըլլալով ի Գահիրէ, որուն կը փոխանորդէր առժամապէս:

— Նախարարաց խորհուրդը իր վերջին նիստին մէջ, զոր գումարեց Բաս-էլ-Թինի պալատը, վաւերացուց դատական ծախուց

վերջեալ նոր սահմանը: Որոշեց նաեւ տուրքի ենթարկել Տօնիօլայի նահանգին այն հողերը ուր արմաւենի տնկուած կայ:

— Ապուրիի ազի ընկերութեան ստացուածքն եղող հողերուն մեծագոյն մասը որոնք Պէհէրայի շրջանակին մէջ կը գտնուին, Ալեքսանդրիոյ կառավարչութեան իրաւասութեան ենթարկուելու խորհուրդ կայ:

— Միջերկրականի անգլ. նաւատորմին առաջին բաժինը, ընդ հրամանատարութեամբ Սըր Ճօն Հօքքինսի, յառաջիկայ երեքշաբթի կը մեկնի Մալթայէն՝ շարաթ օրը Ալեքսանդրիոյ նաւահանգիստը դալու համար որ պիտի մնայ մինչեւ հոկտեմբեր 12: Յետոյ, Սուրբ ծովէն ծովէն երկայնութեամբ շրջան մը կատարելով, Մալթա պիտի վերադառնայ:

— Էմիրըն Կազէր կը ծանուցանէ թէ բրէստ Իպրահիմ Մուհամմէտ Սէյֆէտտին՝ ոստիկանի մը վրայ ձեռք վերուցած ու Սան-Սթեֆանօյի մէջ դալթակալական արարքի մէջ գրտնուած ըլլալուն, պիտի դատուի Ալեքսանդրիոյ նախնական դատարանին առջեւ:

— Եգիպտական կառավարութիւնը 2500 ոսկիի յաւելումով կ'արկ մը յատկացուց բանտային վարչութեան, բանտարկեալներու սնունդին համար:

Կեղծ գրամները եւ կեղծ բժիշկները շատ մը գոհեր կընեն միամիտներու աշխարհին մէջ, ամեն օր ազնոյ վրայ կը խօսուի եւ սակայն մարդեր կան որ կուրորէն կը խորոլին թէ՛ մէկէն եւ թէ՛ միւսէն: Հետեւեալ պատմութիւնը անգամ մը եւս կը հաստատէ մեր ըսածը:

Ալեքսանդրիոյ Մուհարրէմ-պէյ թաղին մէջ հարուստ տեղացի մը ժամանակէ մը ի վեր անկողնոյ կը ծառայէր եւ բժիշկները — անոնք որ կեղծ չեն — կարող չէին եղած զինքը բուժել:

Անցեալ օր Ալեքսանդրիոյ մը այցելութիւն տուաւ այդ հարուստ հիւանդին, ասորին անդիլէն խօսակցելէն ետքը կարգը հիւանդութեան եկաւ:

Խորամանկ ալեքսանդրիոյ առաջարկեց զինքը բուժելու եթէ 600 ոսկիի գումար մը իրեն տրուէր: Հիւանդը իր հաւանութիւնը կուտայ եւ 600 ոսկին կը համրէ կեղծ բժիշկին:

Այդ օրէն ի վեր մեր ալեքսանդրիոյ մէջտեղ չէ ելած եւ հետեւաբար հիւանդը դիմած է ոստիկանութեան:

Բարեկամներու հետ խօսած պահուն՝ բազմախնդիր բժիշկին գոհը հետեւեալ խորհրդածութիւնը ըրած է այս դէպքին վրայ:

— Ճշմարիտ բժիշկները ասին օր կը խարխիլէին, մինչդէռ ասիկայ մէկ անգամէն խաբեց լինցաւ:

Այս խաբեքուն մէջ փոխադրութիւն մը կայ զոր կը յանձնարարենք այն բժիշկներուն որոնք... ալեքսանդրիոյ չեն:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ալեքսիի Խորհրդարանը, նորակալմ նախարարութեան վտանգութեան քուէ տալէն ետք, իր նիստերը դադարեցուց մինչեւ այն օրուան համար ուր կառավարութեան կողմէ իրեն պիտի ներկայացուի հաշտութեան կնքման վերջնական պայմանագիրը: Թուրքահեշքեանական ռազմագիտական նոր սահմանագրի որոշման համար Յունաստանի կողմէ պատուիրակ կարգուած են գնդապետ Լիքուտիս եւ Պ. Ռայի: Իսկ հեշքեանական գետնին Պ. Մալթա լոկօրոտաթօ արգէն իսկ Կ. Պոլիս հանդէս կը յուսացուի ուրեմն որ բանակցութիւնները ա-

րագ կերպով առաջ տարուին ու աւարտին:

Օսմ. Պանքայի ընդհ. տնօրէն Սըր Էտկար Վինսընդ Ալեքս. հասած է՝ պատերազմական տուգանքի մասին ըլլալիք կարգադրութեամբը զբաղելու:

Այս առաւօտ Ալեքսիէն Հալապի հեռագիր մը կը ծանուցանէ թէ ելմտական նախարար Պ. Սթրէյթ յայտարարեց թէ Սըր Էտկար Վինսընդի թէ կարելի չէ օրեւէ առաջարկ ըսել, մինչեւ որ ելմտական միջազգային Յանձնաժողովը իր տեղեկագիրը ներկայացունէ:

ԳՈՒՊԱՅԻ ԱՊՍՏՈՒԲՈՒԹԻՒՆԸ

Ռիւթերի հեռագիր մը կը հաղորդէ թէ պանիական կառավարութիւնը որոշեց ինքնօրինութիւն տալ Քուպա կղզիին, Սպանիոյ գերիշխանութեան ներքեւ, լայց միւսնայն աւան ապստամբներուն դէմ պատերազմը շարունակել որքան ատեն որ հարկ ըլլայ:

ՍՈՒՏ ԼՈՒՐԵՐ

Մեր մէջը չէ միայն որ մարդիկ կան որոնք բան գործ չունին բայց եթէ տղին անգին սուտ լուրեր տարածել՝ հանրութեան միտքերը խանգարելու համար. ամեն ազգունի այդ տեսակ արարածներ, ամեն իրեւ amateur եւ ուրիշներ շահաւոր ակնկալութեամբ կամ բանի մը միտա հասցունելու նըպատակով: Այսպէս, երկու օր առաջ զրոյց մը ելաւ թէ Ալեքսանդրիոյ մէջ քուլերայի դէպք մը պատահեց է. ասիկայ նպատակաւոր սուտ մըն էր պարզապէս: Զօրաշարժիկներու եղանակին մօտ, այս տեսակ «տեղեկներ» երեւան կուգան ընդհանրապէս, իրենց համախոհ թղթակիցներ ալ գտնելով՝ եւրոպա գրելու կամ հեռագրելու համար խօսին:


Առողջապահական վարչութիւնը ոչ իսկ պէտք տեսաւ հերքելու:

Իրաւ է որ Ալեքսանդրիոյ առողջապահական վիճակը լաւ չէ այս միջոցիս. բայց տիրող հիւանդութիւնը տանկ է եւ ոչ ուրիշ բան. հարբուխէ բռնուած, հալացող անցորդներ միայն կը տեսնուին փողոցներուն մէջ. Գիշ մը զգուշութիւն հարկաւոր է: Գիշերայի ոչ հետք կայ ոչ երկիւղ:

Ա. Զ. Դ

Տիկին Էօթէնի Էրզուրումեան որ այժմ Գանիէ հաստատուած է, պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է դաւանադարձութեան դասեր տալ մասնաւոր տներու եւ վարժարաններու մէջ:

Դիմել փարոսի խմբագրատունը կամ Տ. Գաբրիէլ Նեանեանի: 1—6



ՃԵՐՄԱԿԵՐԵՆ ԵՒԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ ՇԱՄԱՐ ԳՈՐԾԱՆԵՑԷՔ

ԼԷՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախքի եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքրութեան կասարեղագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճեմակեղեկներու եւ այլոց հսկանքի մաս:

ԿԱՐԵԻՈՐ. Լեւաիկ Տի Ժեմին ԶԻ ՄԱՇԵՑՆԵՐ

Ներառւոյց եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլոստիկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեղիպոս Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ Գանիէ. ՊԱՅՐԱ ՄՈՒՐՈՒՐ

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՀԵՌԱԳՐՈՎ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Նորորինակ ամուսնութիւն մը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ Ամսթէրտամի մէջ :

Երկու նշանածները հաղորտ որ մզմունքով զատուած էին իրարմէ, նա թրանսվալ կը գտնուէր և նէ ի Հոլանտա :

Մեզ համար անծանօթ պատճառներով ստիպեալ էին սրտակույ՝ հակառակ իրարմէ այդքան հեռու գտնուելուն :

Բայց կամքին ձեռքէն բան չի փախիր Աւստիկ իրենց գիւտը որով կրցան առանց իրենց տեղէն չար, ժեղու պատկի արարողութիւնը կատարել :

Հետագրական մասնաւոր թէլ մը հաստատեցին թրանսվալի և Ամսթէրտամի միջեւ որուն մէկ ծայրը Բրէթօրիայի օթէլներուն մէկ սենեակին մէջ կը գտնուէր և միւսը օրիորդին տան սրահին մէջ ուր դեղանի օրիորդը հարսնական քողին տակ կը լինէր :

Մէյքըն ալ Բրէթօրիայէն եկող թէլին վրայէն լուսեցաւ նշանածին ծայրը ուր կը հարցնէր՝ «Երաւ րա՞տ էր» : այս հարցման վրայ քաղաքային պաշտօնեաները սովորական ձեւակերպութիւնները կաւտարեցին երկու կողմին հաղորդելով փոխադարձ այլոները :

Նորապտակ ամուսնութիւն միայն մէկ դժգոհութիւն ունեցաւ, այն է թէ երկտրականութեան դերը ստույգ տեղին չէր անցներ :

ՌԵԲԼԱՄԻ ՆՈՐ ԶԵՒ ՄԸ

Անգլիական Տեյլի Թեյեկրաֆ Լրագիրը ծանուցումի նոր եզանակ մը հնարած է իր սեպտեմբեր 25ի թիւին մէջ : Հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար՝ չորսրայի մը վրայ որ նոր մէջ տեղ ելած էր, գործարանատէրը վարձած էր այդ Լրագիրն երկու էջերը որոնք կը պարունակէին Լանտոնի բոլոր նպարավաճառներու անունները, փողբիկ կենսագրական ծանօթութիւններով և կը ծանուցուէր թէ այդ նպարավաճառները սրտորատ էին նոր չորսրայէն նմոյշ մը ձրի տալ ամեն իրենց ղիմողներուն :

Այդ նպարավաճառներէն ամեն մէկը կը վճարէր իրմէ չորսրա ուղղութեամբ 10 սանթիմի թղթաւ, դրոշմ մը՝ գին Տեյլի Թեյեկրաֆի մէկ թիւին ուր այդ հասցէները նշանակուած էին :

Այսպէսով հասարակութիւնը թէ՛ ձրի թերթ մը կարգացած է և թէ անկուտի կերպով նախաճաշ մը ըրած :

Տարիքոտ, տղեղ մէկը գեղանի կնկան մը կը հետեւի երկու ժամէ ի վեր :

Կինը ծանծրայած՝ ետին կը դառնայ և Պարսապ տեղը մի յագնիք, Պարսն, արդէն սիրտս ուրիշի տուած եմ, կրնէ :

— Բայց ձեզի ո՞վ ըստ թէ այդքան բարձրեւուն աչք ունիս :

ՏՊԱՐԱՆ
"ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ"

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ
ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ԵՐՁԱՐԵՐԱԿԱՆ
ՄԱՆԱԶԻ, ՀՐԱԻԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱԲԱՐՏ
ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ
ՀԱՇՈՒՆՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ
ՏՈՄՍԵՐ

Եզրկատարի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձրու եւ տնտեսու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օրեքէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Հ Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու. — Կանխավճար արժեթուղթերու վրայ. — Կատանաձեռն յաճախողներու հաշւոյն համար գանձումներ ընել եզրկատարի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ. — Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով :

Ալեքի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պոլսը փողոց Եզրկատարի հետագրատան դէմ Բէսնազըլու դրամատունը :

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիյէ, հայկական պանդոկին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները դոհայներու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գիններով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսպրէս 1, 2 4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսպրէս 1, 2 4,5	Օմնիպիւս 1 2 3 4,5	Էքսպրէս 1 2 3 4,5
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսպրէս 1 2 4,5	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսպրէս 1 2 4,5	Օմնիպիւս 1 2 3 4,5	Էքսպրէս 1 2 3 4,5
Ալեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	» 6 15	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷՆ-ՍԻԻԷՁ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՁ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէլ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Չակաղիկ	» 1 34	8 54	»	» —	—
»	մեկ. 1 44	9 4	Չակաղիկ	» 3 7	8 53
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	»	մեկ. 3 17	9 3
Սիւէլ կայարան	» —	5 —	Պէնհա	» 4 13	9 47
Տօք (բարափ)	» 6 55	—	»	մեկ. 4 17	9 4
			Գահիրէ	» 5 5	10 35